ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 385 - Ա 16 օգոստոսի 2016 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրմանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 40 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգ»-ի 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ), Կարեն Բարսեղյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Սաշա Բավեյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ), Սուրիկ Խաչատրյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Ռուզաննա Քոլոզյան (Գավառի N5 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն), Հրաչիկ Ասատրյան

(Գանձակի N 2 միջնակարգ դպրոցի տնօրեն)՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Միքայել Եղիազարյանին, քարտուղար՝ Կարեն Բարսեղյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված ատեստավորման ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ԱՎԱԳՅԱՆ